ՀՏԴ 347

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ռ.Բ.Աղասյան

Փիլիսոփայության և իրավագիտության ամբիոն

Ընտրությունները ժողովրդավարության իրականացման առաջնային բաղադրամասերից են և հանրային-քաղաքական իշխանության մարմինների կազմավորման հիմնական միջոցը[1]: Ընտրությունները նաև պետական իշխանության լեգիտիմության /ժողովրդի կողմից ճանաչված և ընդունված/ կարևորագույն միջոց է, որն ապահովում է հասարակության կայունությունը, նրա բնականոն գործունեությունը, քաղաքական էլիտայի որոշարկումը, իշխանությունների իրավահաջորդությունը, ինչպես նաև բնութագրում է պետական կյանքի և քաղաքական ռեժիմի բովանդակությունը[2]:

Ընտրությունները էական նշանակություն ունեն ժողովրդավարական ճանապարհով պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կուսակցական - հասարակական կազմակերպությունների ձևավորման համար: Ընտրությունները ժամանակակից պետականության և քաղաքացիական հասարակության անբաժան ինստիտուտներն են, որոնք երաշխավորում են քաղաքացիների մասնակցությունը երկրի կառավարման գործընթացին: Եվ, պատահական չէ, որ ընտրությունների կարևոր դերին ու նշանակությանն են անդրադարձել միջազգային համապարփակ և տարածաշրջանային հանրաճանաչ փաստաթղթերը՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» /1948թ./, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը /1966թ./, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան /1950թ./ և այլն:

Այսպես, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 21 հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր ոք ունի անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի իր երկրում պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք:

3. Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը, այն պետք է արտահայտվի պարբերական և իրական ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարարժեք ընթացակարգերի միջոցով»[3]:

Միջազգային հանրության պրակտիկայում հաստատվել է այն կարևոր կանխադրույթը, ըստ որի՝ ընտրությունները համարվում են հասարակության քաղաքական կյանքին և կառավարմանը մասնակցելու ամենաարդյունավետ ու ամենաընդունելի ձևը: Այդ իսկ պատճառով վերոնշված հռչակագրի դրույթն իր ամրագրումն ստացավ նաև մարդու իրավունքների միջազգային օրինագծի մեկ այլ կարևոր փաստաթղթում՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 25 հոդվածում, որտեղ մասնավորապես նշված է «Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2 -րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության ու անհիմն սահմանափակումների, իրավունք և պարտականություն ունի.

a/ մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով,

b/ ընտրելու և ընտրվելու իրական պարբերական ընտրություններում, որոնք անցկացվում են համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ և երաշխավորում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը,

c/ իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնելու պետական ծառայության»[4]:

Միջպառլամենտական միությունն 1994 թվականի մարտի 26 -ի հռչակագրում նշվում է որ ժողովրդավարությունն իրական լայն և խորաղաղ մրցակցություն է անհատների, կազմակերպությունների միջև պետական կարևորագույն պաշտոնների համար, այդբերբաբանվում անցկացվող ազատ ու արդար ընտրությունների միջոցով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 1952 թվական մարտի 20 -ի 1 -ին Արձանագրության 3 -ր

հոդվածը սահմանում է ազատ ընտրությունների իրավունքը. «Բարձր այսմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք ապահովեն ժողովրդի ազատ արտահայտուն օրենսդիր իշխանություն ընտրելիս»[9]:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը բազմիցս պարզաբանել է 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածի դրույթները և նշել է, որ տվյալ հոդվածը «նախատեսում է «ազատ» ընտրություններ՝ «ողջամիտ պարբերականությամբ», «գաղտնի քվեարկությամբ» և «ժողովրդի կամքի ազատ արտահայտությունն ապահովելու պայմանով», ենթադրում է ընտրելու և ընտրվելու սուբյեկտիվ իրավունքները /«Լաբիտան ընդդեմ Իտալիայի գործը» 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, կետ 201/»: Ինչպես իրավագիտորեն նշում է Ռ.Եղյանը. «պետական կառավարմանը տարբեր ձևերով մասնակցելու անկյունաքարը եղել և մնում են ընտրությունները, որոնք ելակետային էին նաև պետական կառավարմանը մասնակցելու մյուս իրավունքների լիարժեք իրականացման համար»[8]: Հիրավի, առանց ընտրությունների և ընտրական իրավունքի հնարավոր չէ քաղաքացիների մասնակցությունը պետական կառավարմանը: Ընտրությունները սահմանադրական ու այլ իրավական նորմերով օրինականացված ժողովրդի ուղղակի կամարտահայտության և անմիջական ժողովրդավարության ձևն է[9]: Ընտրությունները հանդիսանում են հասարակության մեջ հակասությունների լուծման ժողովրդավարական ձև, որը բացառում է փոքրամասնության կամ առանձին քաղաքական գործիչների կամքի թելադրումը մեծամասնությանը:

Ընտրությունները համարվում են նաև հասարակական - քաղաքական վերահսկողության արդյունավետ միջոց ընտրողի մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ընտրությունների միջոցով են ձևավորվում նախագահական ինստիտուտը[10], խորհրդարանը[11], և տեղական ինքնակառավարման մարմինները[12]: Եթե «ընտրություններ» տերմինը նշանակում է որպես որևէ մարմնի կամ հաստատության կազմավորման միջոց, ապա «ընտրական իրավունք» հասկացությունը իրավաբանական գրականության մեջ օգտագործվում է երկու առումով՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ առումով ընտրական իրավունքը իրավական նորմերի համակարգված ամբողջություն է, որը կարգավորում է իշխանության ներկայացուցչական մարմինների /պետական և տեղական ինքնակառավարման/ ընտրության կարգը[13]:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք ավելի ընդարձակ սահմանմանը: Օրինակ, ըստ Ռ.Եղյանի. «Օբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքը զարգացած ժողովրդավարական երկրներում, որպես իրավական կատեգորիա, հանրային /սահմանադրական/ իրավունքի ինստիտուտ է, օրենսդրական և այլ իրավական ակտերում համակարգված իրավական նորմերի ամբողջություն, որոնք կարգավորում են ժողովրդավարության իրականացման /պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության/ ընթացքում առաջացած հարաբերությունները՝ սուբյեկտների գործունեությունը, նրանց իրավունքներն ու պարտականությունները»[14]:

Սուբյեկտիվ առումով ընտրական իրավունքը քաղաքացիների կարևոր քաղաքական իրավունքներից է մասնակցելու պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը: Ընտրական իրավունքը քաղաքացու սուբյեկտիվ իրավագրությունների համակարգ է, որտեղ առանձնանում են ակտիվ /ընտրելու/ և պասիվ /ընտրվելու/ իրավունքը[15]:

Ակտիվ ընտրական իրավունքը մասնագիտական գրականության մեջ անվանում են նաև ձայնի իրավունք կամ ընդհանուր ընտրական իրավունք[16]: Պասիվ ընտրական իրավունքի տակ հասկացվում է ընտրություններում քաղաքացին իր թեկնածությունն առաջադրելու իրավունքը կամ առաջադրվելու համաձայնություն տալու իրավունքը:

Այսպիսով, սուբյեկտիվ առումով «ընտրական իրավունք» հասկացության բովանդակությունը ներառում է և՛ ընտրելու իրավունքը, և՛ ընտրվելու իրավունքը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրությունների մասին օրենսդրությունը հանգամանորեն կարգավորում է ԼՂՀ քաղաքացիների ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ ընտրական իրավունքը: Այսպես, «ԼՂՀ նախագահի ընտրությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն. «Հանրապետության Նախագահ ընտրելու իրավունք ունեն 18 տարեկան դարձած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները»:Նույնպիսի կարգ է սահմանված «ԼՂՀ Ազգային Ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» և «ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» օրենքներով /հոդ. 3/:

Ակտիվ ընտրական իրավունքի համամատ պասիվ ընտրական իրավունքը որոշակի ցենզային սահմանափակումներ ունի /տարիքային, քաղաքացիության, նստակեցության, գույքային, ընտրական գրավ և այլն/, որն, ըստ էության, բնութագրական է բոլոր իրավական համակարգերին:

Այսպես, օրինակ, «ԼՂՀ նախագահի ընտրությունների մասին» օրենքով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել՝ վերջին 10 տարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում բնակվող, ԼՂՀ քաղաքացի հանդիսացող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք, ում առնվազն 35 տարին լրանում է նախագահական ընտրությունների տարում» /հոդ. 2/, իսկ ԼՂՀ Ազգային Ժողովի պատգամավոր ընտրվելու համար սահմանված են ավել նվազ տարիքային և նստակեցության ցենզեր. «Ազգային Ժողովի պատգամավոր ընտրվելու իրավունք ունեն մինչև ընտրությունների օրը 25 տարին լրացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր մինչև ընտրությունների օրը առնվազն 3 տարի մշտապես բնակվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում»[17]:

ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմիններում պասիվ ընտրական իրավունքի ցենզը առավել նվազագույնի է հասցված և հիմնականում համապատասխանում է «Տեղական ինքնակառավարման մասին» «Եվրոպական խարտիայի» դրույթներին: Հարկ է ընդգծել նաև, որ ընտրությունների մասին ԼՂՀ օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է միջազգային ստանդարտներին, մասնավորապես՝ «Ազատ և արդար ընտրությունների չափորոշիչների մասին» 1994 թվականի մարտի 26 -ին Փարիզում ընդունված Հռչակագրի դրույթներին[18]:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» օրենքի համաձայն. «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին քաղաքացիները մասնակցում են անմիջականորեն, կամքի ազատ արտահայտությամբ: Համայնքի կառավարման մարմինների ընտրությունների ժամանակ տվյալ համայնքում ընտրելու իրավունք ունեցող բոլոր քաղաքացիներն ընդգրկվում են ընտրական ցուցակում: Համայնքի ընտրական ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր ընտրող ունի մեկ ձայնի իրավունք:

Համայնքի ղեկավար կարող է ընտրվել 25 տարին լրացած, տվյալ համայնքում առնվազն վերջին մեկ տարում մշտապես բնակվող, վերջին երեք տարում հարկեր, տեղական տուրքեր և վճարներ բարեխղճորեն վճարող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի: Ավագանու անդամ կարող է ընտրվել 21 տարին լրացած, տվյալ համայնքում առնվազն վերջին մեկ տարում մշտապես բնակվող, վերջին երեք տարում հարկեր, տեղական տուրքեր և վճարներ բարեխղճորեն վճարող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի» /հոդ. 3/: ԼՂՀ կառավարության 2001 թվականի հունիսի 19 -ի որոշման համաձայն 2001 թվականի սեպտեմբերի 5 -ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով ԼՂՀ 86.525 ընտրողներից քվեարկությանը մասնակցեցին 53.537 ընտրողները, որը կազմում է ընտրական ձայնի իրավունք ունեցող ԼՂՀ քաղաքացիների 61, 9 % -ը[19]: Կայացած ընտրությունների արդյունքներով ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվեցին 194 համայնքի ղեկավարներ և ավագանու 1361 անդամներ[20]:

Ընտրությունների արդյունքը վկայում է ընտրական զանգվածի բավականին բարձր քաղաքական ակտիվությունը, որը ոչ պակաս չափով պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ բոլոր ընտրական հանձնաժողովները ապահովել էին ընտրությունների անցկացման ժողովրդավարական սկզբունքները՝ թափանցիկությունը, արդարությունը և հրապարակայնությունը:

Ընդհանրապես անհրաժեշտ է ընդգծել, որ ընտրությունների անցկացման հիմնական առանցքը կազմում է ընտրական կորպուսը, որի քաղաքացիական ակտիվությունն է որոշում ընտրությունների ընթացքը և արդյունքը: Դրանով է պայմանավորված նաև ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մանրակրկիտ սահմանումը ընտրական օրենսդրությունում:

Ամփոփում

Աշխատանքը նվիրված է սահմանադրական իրավունքի հիմնահարցերից մեկի՝ ընտրական իրավունքի համակողմանի վերլուծությանը: Ընտրական իրավունքը դիտելով որպես քաղաքացու կարևորագույն սուբյեկտիվ իրավունքներից մեկը, դիտարկվում է նաև որպես հասարակական-քաղաքական վերահսկողության արդյունավետ միջոց ընտրողի ներկայացուցչական պետա-

կան մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ: Աշխատանքում վերլուծվել են բարդությունները կարգավորող նորմատիվ-իրավական ակտերը ինչպես կոնկրետ օրինակների, այնպես էլ համապատասխան միջոցների նորմերի համատեքստում:

Резюме

Работа посвящена одному из основополагающих вопросов конституционного права - всестороннему анализу избирательного права. Рассматривая избирательное право как важнейшее субьективное право гражданина, можно также представить его как эффективное средство общественно-политического контроля над избираемыми представительскими государственными органами и деятельностью должностных лиц. В работе анализируются затруднения,связанные с регулирующими нормативно-правовыми актами на примере как конкретных фактов, так и соответствующих систем международных норм.

Գրականություն

1. Մանրամասն տե՛ս. Եղյան Ռ.Հ. Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը: Երևան, 2000;
Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պատ. խմբ. պրոֆ. Ն.Ա.Այվազյան. Երևան, 2003, էջ 381 - 385;
Избирательное право и процесс в Российской Федерации. М., 1999; Авакьян С.А. Реформа советской избирательной системы важнейший шаг в демократизации жызни общества. "Государственно - правовые аспекты демократизации советского общества". Под ред. С.А. Авакьяна. М., 1990; Астафичев П.А. Избирательное право России: современное состояние и перспективы развития. Орел, 1999.
2.Տե՛ս. Конституционное право зарубежных стран. Под ред. проф. В.О. Лучина, проф. Г.А. Василевича, проф. А.С. Прудникова. М., 2001, с.187.
3.Տե՛ս. Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր: Պաշտոնական հայերեն թարգմանություն Փաստաթղթերի ժողովածու: Գիրք Ա: Երևան, 2001, էջ 17; Նաև՝ Международные акты права человека. Сборник документов. 2 -е издание. М., 2002, с.41.
4. Տե՛ս. Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր. էջ 79:
5. Տե՛ս. Россия. Власть и выборы. М., 1996, с.73.
6. Տե՛ս. Марк Дженис, Ричард Кэй, Энтони Брэдли. Европейское право в области прав человека. Практика и комментарии. М., 1997, с.565.
7. Տե՛ս. Մարդու իրավունքների Եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի /1978 - 2000 թթ./, Երևան, 2002, էջ 127:
Տե՛ս. Նաև՝ Մատիո - Մոհին և Կլելֆայտն ընդդեմ Բելգիայի 1987 թվականի մարտի 2 -ի վճիռը, Շար Ա N 113, էջ 23, կետ 52 /European Court of Human Reights: judgments and decisions. Strasfurg, 2 March 1987 /Mathieu - Mohin and Clerfayt /Belgium/ Series A. N 113, P. 24, Para 52/.
8.Եղյան Ռ.Հ. Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը. էջ 8:
9. Տե՛ս. Пылин В.В. Избрательное и референдумное право Российской Федерации: Учебно - практическое пособие. СПб., 2003, с.88.
10. Տե՛ս. ԼՂՀ օրենքը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրությունների մասին». Ստեփանակերտ, 2000:
11.Տե՛ս. ԼՂՀ օրենքը «Լեռնային Ղարաբաղի պատգամավորների ընտրությունների մասին». Ստեփանակերտ, 2000:
12.Տե՛ս. ԼՂՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» /հետագա լրացումներով և փոփոխություններով/. Ստեփանակերտ, 2001: 13. Տե՛ս. Блкин А.А. Избранные работы 90 -х годов по конституционному праву. СПб., 2003, с.240.
14.Եղյան Ռ.Հ. Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը. էջ 10:
15. Տե՛ս.
16.Տե՛ս. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Պատ. խմբ. պրոֆեսոր Ն.Ա.Այվազյան. Երևան, 2003, էջ 382:
17.Տե՛ս. ԼՂՀ օրենքը «Լեռնային Ղարաբաղի պատգամավորների ընտրությունների մասին».հոդ. 3:
18.Ընտրական իրավունքի միջազգային չափորոշիչների մասին մանրամասն տե՛ս. OSCE. Рекомендации по анализу законодательной базы выборов. Варшава, 2001; Вешняков А.А. Избирательные стандарты в международном праве и их реализация в законодательстве Российской Федерации. М., 1997.
19.Տե՛ս. Սերգեյ Դավթյան. Ժողովրդավարության ուղիով. Ստեփանակերտ, 2002, էջ 27:
20. Տե՛ս, Նույն տեղը, էջ 28: